

Մ Ի Ս Ա Ք Մ Ե Ծ Ա Ր Ե Ն Ց ⁽¹⁾

Միսաք Մեծարենցի տաղանդը յատկանշելու համար անհրաժեշտ չեն խորունկ վերլուծումներ եւ հոգեբանական խրթին հետախուզութիւններ: Անոր արուեստը եղած է վճիռ եւ հաղորդական եւ անոր գործը գտած է անմիջական եւ ընդհանուր հաւանութիւն: Եւ եթէ եղած են վերապահութիւններ, անոնք կուգան տեսակէտներու տարբերութենէն եւ զգայնութիւններու զանազանութենէն, եւ կը ծառայեն միմիայն վեր հանելու արուեստի գործի մը յատկանշական ինքնատուութիւնը, որ կը հեռացնէ ամէն անտարբերութիւն:

Մեծարենց ամէն բանէ առաջ բնութեան բանաստեղծն է: Իր գործը շարք մըն է լիթանիներու՝ բնութեան ուղղուած, երգելու համար զայն, ըսելու համար անոր փառքը իր բոլոր ձեւերուն եւ բոլոր պահերուն մէջ: Քիչ կը պատահի տեսնել բանաստեղծ մը, որուն գործը, չնչին բացառութեամբ միայն, նուիրուած ըլլայ տարրերուն երգին, վանելով նոյն իսկ նոյնքան բանաստեղծական եւ քնարական ուրիշ զգացումներու արտայայտութիւնը: Եւ հոն ուր

բանաստեղծը կը վերադառնայ աւելի անձնական երգի մը, դարձեալ ատիկա կ'ըլլայ բնութեան տէֆօնին մէջ, որ իբր հայելի կը ծառայէ իր զգացումներուն, որոնց ոգեկոչումը պատրուակ մըն է կարծէք չքեղ կամ սրտազրաւ զաշտանկարներու ներկայացումին:

Ան երգած է բնութիւնը այնպէս ինչպէս տեսած է իր ծննդեան բնադաւառին մէջ, եւ իր պատանութեան տեղափոխութեանց ընթացքին: Բարեհամբոյր եւ դիւրամերձ բնութիւն մը: Եւ իր դիւրաթեք ու հեշտասէր արուեստը, իր երգին հանդարտ եւ մեղմոյր ծաւալումը հոն գտած են իրենց արտայայտութեամբ, իրենց ծաղկումին համար ամենէն ընդունակ պատկերները:

Եւ Մեծարենց սիրով, հեշտութեամբ եւ ազահութեամբ նետուած է այդ բնութեան ծոցը: Եղած է ճարտասան, շատախօս, գորովալից, բայց միշտ ներշնչուած սրբազան տենդով մը, պարզելու համար մեր առջեւ իր աչքերուն ամբողջ հարստութիւնը: Շարունակական ցայտում մըն է անոր քերթուածը խանդավառ եւ հիացիկ ոգեկոչումներու: Եւ մինչ ի վերջոյ կը թուի թէ բանաստեղծը կանգ պիտի առնէ, նոր հրթիռ մը լոյսի եւ պատկերներու կը բարձրանայ, պատմելու համար գիւղերը, հիւղերը, ճամբաները կամ իրիկնային պահերը եւ անոնց մեղկ գոյները, կամ գիշերուան մէջ իրերուն սպասումը առաւօտեան լոյսին:

(1) Այս վերլուծական ուրուագիծը հեղինակին կողմէ կարդացուեցաւ Միսաք Մեծարենցի գործին նուիրուած երեկոյթին գոր վերջերս կազմակերպած էր Կեդրոնականի նախկին Սանուց Միութիւնը՝ Փաբիգ՝ Օթէլ տէ Սօսիէթէ Սավանքի սրահներէն միոյն մէջ:

Անսահման խանդավառության զեղում մը կը լեցնէ անոր գործը բոլոր իրերուն եւ բոլոր տարրերուն համար: Իր բնդարձակ եւ համադրական պատկերներէն զատ որոնք ամբողջ դաշտանկար մը կ'ընդգրկեն, եւ որոնք կը գտնուին մասնաւորաբար Ծիածանին մէջ, անոր գործը անդադրում թուումի մը մէջ կ'անուանէ եւ կը փայփայէ բոլոր պատուզները եւ երեւոյթները բնութեան:

Նկատի առնել որ Մեծարենցի ոգեկոչումները նկարագրութիւններ են միայն, եւ ան չի խօսիր մարդոց աշխատութիւններուն վրայ, բաց ի քերթուածէ մը, Զրտուէն: Պատճառը այն է անշուշտ, որ գերազանցապէս եւ տարածերթօրէն անձնական բանաստեղծ, իրեն համար բնութեան պատկերները առարկայացումը կամ չըջանակն են շատ յաճախ հոգեկան վիճակներու:

Մեծարենցի անունը կապուած կը մընայ մեր բանաստեղծութեան մէջ Դուրեանի անուան հետ: Իրենց կեանքին ճակատագիրը, իրենց երգին հանգիստութիւնը, իրենց տաղանդին հաւասար, թէեւ այլաձեւ, մեծութիւնը, անխուսափելի դարձուցած են այդ զուգորդութիւնը: Բայց Դուրեանի արուեստը չունի Մեծարենցի ճոխութիւնը եւ առատութիւնը եւ, Դուրեանի ժամանակ, լեզուն հասուն չէր: Ասոր փոխարէն Մեծարենցի բանաստեղծութիւնը չի պարունակեր Դուրեանի եղերական աղաղակը, այն մոխիրի համը, այն մըռայլ վեհութիւնը որ այնքան մարդկայնական չեւոյթ մը կուտան Դուրեանի գործին:

Մեծարենցի մօտ հիւանդութիւնը եղած է աւելի մեղմ եւ թուած է աւելի խնայող: Անոր համար է անշուշտ որ իր քերթուածը չունի մահամերձի մը երգին դառնութիւնը: Հազիւ քանի մը

տող որոնք տեղ տեղ ակնարկել կը թըւին իր տենդին.

«Անօրինակ երագի մը մէջ կիսագգած կը թափառիմ»

կամ այնքան ծանօթ այն աղերսանքը.

«Շողա՛, բարի արեւ, հիւսնդ եմ...»

Բայց ախոր կը թուի երբեմն տեղի տալ եւ յոյսեր ներշնչել: Այդ տեսակ չըջանի մը մէջ է որ գրած է անշուշտ.

«Ու պիտի ապրիմ, վիշտը նոր ուժեր կը բերէ յանկարծ հոգւոյս սիրավեր»:

Իր գործը հազուադէպօրէն կը պարունակէ արդէն յուետեւ եւ յուսահատ տրամադրութիւններ: Ընդհակառակը, ան ըլլալով ճոխ եւ բազմերանգ նկարիչը խնդացող բնութեան մը, առողջաբար եւ հանդարտեցնող շունչ մը կը շրջի յաճախ իր քերթուածներուն մէջ:

Միտաք Մեծարենց տեսակ մը վերապահութիւն կը դնէ իր մտերիմ զգացումներուն արտայայտութեանը մէջ: Սիրոյ զգացումը պզտիկ տեղ մը կը գրաւէ իր գործին մէջ: Երկչոտ եւ քողարկուած իզներ կը ծագին, դաշտանկարի մը անկիւնէն, երբ բնութեամբ լիացած եւ դինովցած հոգւոյն մէջ կը բարձրանան ամէն տեսակ յուզումներ: Այսպէս այն զմայլելի քերթուածին մէջ որով կը սկսի Նոր Տաղերը, կամ այն, Նոր Տաղերուն մէջ դարձեալ, որ կը կոչուի Իրիկունս.

«Ահա կ'անցնի մըշուշուած բիլ կազով տեսիլ մ'ալ գերթ ալիք.

Զարմանուի մ'է վարդագեղ, կաթ ու վարդի հըրաշալիք,

Յաւերժահարս կաթ ու վարդէ, ծաղիկ, ֆանանչ, ջուր ու գեփիւ,

Շատ էր լեցուն, հոգւոյս, ո՛վ Տէր, բազմագեղումն այս շրջափիւն»:

Եւ երբ կը գոչէ տեղ տեղ.

«Շրթունքս եմ ծարաւ միա՛կ համբոյրիմ...»

կամ

«Եկուր, հոգիս, եկուր երթանք միասին,
Մինչեւ եղեմն աստուածային, մինչեւ
կին...»

Իր կինը, գլխադրով գրուած, որքա՞ն
անանձնական է: Տեղ միայն, Մեծա-
բենցի գրչին տակ, կը հանդիպինք քիչ
չատ խիզախ պատկերի մը, ռոմանթիկ
պատկեր մը, իր կուրծքին վրայ պահ-
ուած տոմսակով, այն քերթուածին մէջ
որ կը կոչուի Թղթիկը, եւ որ ծանօթ չէ
չատ, որովհետեւ չի գտնուիր իր ողջու-
թեանը հրատարակուած հատորներուն
մէջ: Ահա քանի մը տողեր անկէ.

Ուր ծաղկաւեր գլխով աղջիկն ըսպի-
տակ
Մահիճին մէջ ընկողմանած, աչքը
բաց,
Ձեռքը թուղթին, թուղթը սրտին կ'ե-
րագէ...

Տաք է, մէկ կողմ կը նետէ շուտ իր
վերմակ
Ու կը հանէ շապիկն ալ գաղջ ու ներ-
մակ,

Ու կը կայնի հոն, հերարձակ, հոլանի,
Հայլիին դէմ, ձեռքն ըստինքին, երա-
զուն,

Ինչպէս բոց մը, ինչպէս խուրձ մը ցո-
րենի.

Թղթիկին պէս հայլիին քաղցր է լե-
զուն...:

Դարձեալ այդ քերթուածներուն
մէջ որոնք դուրս կը մնան Միածանէն
եւ նոր Տաղերէն, կը գտնենք ուշադրաւ
քերթուած մը, Արդի մարդուն Հայր
Մերը, աւելի ծանօթ իր առաջին տո-
ղովը.

«Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն ան-
անձնական...»

Ատիկա դարձեալ աղաղակն է բա-
նաստեղծին որ անհուն խանդաղատան-
քով լեցուած է բոլոր իրերու եւ մարդե-
րու հանդէպ: Կրօնական չունչ մը կը

թեւածէ անոր պատկերներուն վրայ,
ինչպէս պատահած է իրեն ուրիշ քանի
մը անգամներ, երբ գրած է «Կիրակի-
մուտք»ը, չարաթ երեկոյեան աղօթե-
րութեանց խորհուրդովը եւ քաղց-
րութեամբը լեցուած, կամ «Աստուա-
ծամա՛ր»ը, որ դարձեալ կրօնական
յուզմունքներու զեղում մըն է՝ գիշե-
րային պահու մը մէջ:

Անմիջապէս որ բանաստեղծը քիչ
մը լայն եւ քիչ մը խորունկ ակնարկ մը
կը նետէ իրերուն վրայ, աստուածնե-
րու ներկայութիւնը եւ անոնց ոգեկո-
չութիւնը անխուսափելի կը դառնայ:
Լամառթիւնի Լիւնին մէջ, ըսուած է, Ժա-
մանակը կ'իտուին անձնացած է: Թէքէ-
եանի քերթուածներուն Աստուածը ա-
ւելի բան մըն է քան բանաստեղծական
figure մը, ինչ որ կը նշանակէ թէ ող-
բերգական բարձր յուզումը կը հրաւիրէ
խորհուրդը եւ ճակատագրականութիւ-
նը, որոնք չեն կրնար արտայայտուիլ
այլապէս քան կրօնական ոգեկոչումով:



Երբ Մեծարենցի դործը երեւցաւ,
մեր գրականութիւնը կը գտնուէր իր
անկումի, բնկճումի շրջաններէն մէ-
կուն մէջ, մտաւորական քաոսի մը մէջ:
Անուննին միաք չմնալիք մարդեր խճո-
ղած էին գրական հրապարակը: Բայց
բանաստեղծութիւնը կ'ուրանայ քաոսը
եւ Մեծարենցի բանաստեղծութիւնը,
իր նորութեան փայլովը եւ ուժգին ինք-
նատպութեամբը, իր ներքին կազմա-
կերպութեամբը, շատ զօրաւոր կերպով
կը հակադրուէր օրուան սնամէջ կամ
թեթեւօրիկ տաղաչափութեան հետ
որպէս զի պղտիկ վայնասուն մը չփր-
թէր իր անուան չուրջ: Բայց ատիկա
այսօր բոլորովին դուրկ է կարեւորու-
թենէ եւ անքթոտային հետաքրքրու-
թիւն մը միայն կրնայ արթնցնել:

Մեծարենցի բանաստեղծութիւնը հանդիպեցաւ ընդհանուր եւ միաձայն խանդավառութեան մը: Իր արուեստը գերազանցօրէն հաղորդական էր եւ ինքզինքը կը պարտադրէր ամեն բանէ առաջ, այսպէս ըսելու համար, իր Ֆիլիքսիական եւ sensuel յատկութիւններով:

Ամէն մարդ համաձայն է Մեծարենցի մէջ տեսնելու համար մեր բանաստեղծական երաժշտութեան մեծագոյն virtuoseներէն մէկը: Բայց երաժշտութիւնը բառերուն համահնչիւն զուգորդութիւնը չէ, ինչպէս բանաստեղծութիւնը քաղցրահնչութիւն չէ: Անիկա աւելի ներքին եւ աւելի խրթին յատկութիւն մըն է, կաղմուած՝ բառերուն հնչական առաքինութիւններէն զտո՝ այն թիւի, դաշնութեան եւ վերադարձի բզմանութիւններէն որոնք հիմնական տարրերը կը կազմեն իսկական բանաստեղծութեան:

Մեծարենց գերագոյն չափով մը օժտուած է ձայնական եւ կշռական այդ յատկութիւններով, որ իր երգին կուտան այն անմոռանալի շեշտը որուն յիշատակը տեւականօրէն կը հետապնդէ մեզ:

Միեւնոյն ատեն, Մեծարենցի քերթուածին մէջ երաժշտութիւնը կ'ընկերանայ պատկերներու բաղմամբոյն թափորի մը:

Բանաստեղծը կը քալէ աշխարհի մէջ անդադար հանդիպելով պատկերներու որոնք կը բաղմապատկեն անոր գիւթութիւնը: Բայց իր պատկերը չունի այն խորհրդանշանական դերը եւ քմայքոտ գծագրութիւնը որ տարտամութիւն միայն կ'ընայ յառաջ բերել: Ամէն մարդ գիտէ թէ պատկերներու առատութիւնը քողի մը տակ կը ձգէ յաճախ մտածումը եւ նոյն իսկ նկարագրութիւնը, եւ կը ծառայէ միայն ե-

րեւակայութեան մը աղքատութիւնը ծածկելու:

Մեծարենցի պատկերները դրեթէ միշտ վերցուած են իրական աշխարհէն անխարդախ եւ անխաթար եւ ամբողջութեամբ, եւ իր քերթուածին կը բերեն այն զգալի առարկայականութիւնը, այն լոյսը եւ նիւթականութիւնը որ անոր կուտան իր Ֆիլիքսիական շնորհները:

Իրենց չքեղ եւ հարուստ հիւսուածքին մէջ, ինչպէս բաղմամալ բայց թեթեւ պատառ մը, անոր պատկերները կը պարուրեն իր քերթուածը եւ կ'արտայայտեն ամբողջ եւ միակ էութիւնը իր մտադրութեան, բաղդաւորութեամբ մը, ճշգրտութեամբ մը եւ ճոխութեամբ մը որ ապշեցուցիչ է: Թերի կամ աւելորդ գիծ մը՝ եւ պիտի անհետանար արդէն երգին ամբողջ հմայքը:

Միսաք Մեծարենց ամէն բանէ առաջ պատանի տարիքին բանաստեղծն է: Իր ձեւական կատարելութիւնները, իր ոճին հեշտութիւնները, իր ներշնչած ազնուական յոյզերը ամենէն աւելի կը գրգռեն եւ կը գոհացնեն երիտասարդ տարիքին բոցը եւ իղձերը:

Մեծարենց հարազատ ներկայացուցիչն է մեր այն բանաստեղծութեան, որ դրեթէ մեր ամբողջ բանաստեղծութիւնն է, որ իր հարստութեան աղբիւրը կը փնտռէ արտաքին աշխարհի գիւթութիւններուն, եւ քանի մը մայր գգացումներու արտայայտութեանը մէջ:

Պէտք է գալ մինչեւ թէքէեանի բանաստեղծութիւնը, հասնելու համար արուեստի մը որ աւելի ընդհանուր տարողութիւն ունենայ, որ վերադարձ մը ըլլայ մարդկային հոգւոյն եւ անոր ճակատագրին վրայ, որ, հեռանալով իրերուն խճողումէն, կ'ուզէ նախընտրաբար նշմարել աշխարհի բարոյական դիմագծութիւնը, եւ որ իր զգայնութիւն-

ները կ'արտայայտէ խորհրդանշաններով որոնք ուղեղային յուզմունքի մը առարկայական սլատկերներն են: Հոս ոստումի մը, մտաւորական մակարդակի փոփոխութեան մը երեւոյթը կայ որ կրնայ առարկայ ըլլալ խոր եւ նրբակրկիտ ուսումնասիրութեան:

Մեծարենց միշտ խուսափած է իր քերթուածները ձեւական հարկադրանքներու ենթարկելէ: Անոր ամբողջ գործին մէջ կարելի չէ հանդիպիլ հնչեակի մը: Ամենամեծ ազատութիւնը տուած է իր տողերուն յարգարանքին, որոնք միեւնոյն քերթուածին մէջ միացած կամ հեռացած են իրարմէ, կազմելով տուններ բոլորովին կամայական մեծութիւններով:

Այս տեսակէտով մեծապէս օգտուած է իր «Ըլլալի»ներու գիւտէն, ուր քերթուածին տուններուն համանման կրկնութիւնը զինքը կ'ազատէ շարադրութեան կաշկանդումէն, եւ երեւակայութիւնը սանձարձակ կ'արշաւէ բոլոր իրերուն եւ բոլոր հորիզոններուն վրայ:

Միեւնոյն ձեւով, միեւնոյն քմայքը տարած է երբեմն, քիչ անգամ, իր քերթուածը աւելորդ ծանրաբեռնումներու: Իր Արդի մարդուն Հայր Մերը պիտի չահէր քանի մը տուններու յապաւումէն, որոնց իմաստը մութ է:

Բառերու հետ անհուն խաղէ մը բրունուած, ան կը գինովնայ անոնց քաղցրութենէն եւ հեշտութենէն. անոնց թեքումներէն որոնք ախորժելի են. ա-

նոնց հնարամիտ եւ նուրբ ազուցումներէն: Այդպէսով է որ երբեմն իր տողերը կը խճողուին, կամ տեղի կուտայ գիւրին effetներու փորձութեանը.

Մէջն հոսեւան ծայրիններուն ծայրա-
ծաւալ ծաղիկներուն:

Բայց երբ կը հաւաքէ եւ կը բարենխառնէ իր առատութիւնը, կը հասնի կատարելութեան:

Մեծարենց բառերու մեծ աշխատաւոր մըն է: Հազիւ ապրիլ սկսելու ժամանակը ունեցած՝ ան տէրն է լեզուի մը որուն կը ճանչնայ բոլոր թաքուն հարստութիւնները եւ բոլոր կարելիութիւնները:

Մեր դիւրաթեք լեզուին խմորը անոր ճարտար մատներուն մէջ կը դառնայ գործիք մը անհամար շինութիւններու: Ամենէն ապահով ճաշակէն առաջնորդուած, իր տեսողական եւ երաժշտական ներշնչումներուն համաձայն ան կը կատարէ բոլոր այն բառական գիւտերը որոնք անկորնչելի զարդերը պիտի մընան իր բանաստեղծութեան:

Դպրոցը՝ ուր ան ստացած է իր մրտաւորական կազմութիւնը, ենթարկած է զայն դասական ուսումներու տիպիքի մը որով դարբնուած է իր արտայայտութեան զմայլելի եւ անարատ գործիքը, ու իր գործը թանկագին եւ նուիրական մէկ պսակումը եղած է այն բարձրագոյն նպատակներուն որոնց համար հիմնուած է ան:

ԳԵՂԱՄ ՖԻՆԷՐՃԵԱՆ